17 նոյեմբերի 2011 թվականի N 1600 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N 868-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հունիսի 23-ի «Ներդրումային ծրագրի շրջանակներում «ԷԿՈՏՈՄԱՏՈ» փակ բաժնետիրական ընկերության կողմից 300 միլիոն դրամը գերազանցող ապրանքների ներմուծման դեպքում մաքսային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետը մինչև երեք տարի ժամկետով հետաձգելու մասին» N 868-Ա որոշման N 1 հավելվածի աղյուսակում կատարել հետևյալ լրացումը և փոփոխությունը՝

1) 122-րդ տողից հետո աղյուսակը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 123-րդ տողով.

«

123.	060240	Վարդերի սածիլներ	-	հատ	200000	Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա, ՌԴ	Հոլանդիա, Իտալիա, Գերմանիա, ՌԴ	250000000	2011/X	2013/X

».

2) «Ընդամենը» տողում «2,640,270,833» թիվը փոխարինել «2,890,270,833» թվով: